Պատասխանների թերթիկների լրացման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման ժամանակ օգտագործվող ***ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ*** նախատեսված են 14 առարկաների (մաթեմատիկա, ֆիզիկա, աստղագիտություն, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն, հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն, ՆԶՊ, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) առաջադրանքների պատասխանները լրացնելու համար: Պայմանականորեն այն բաժանված է երկու խմբի՝ բնագիտական և հումանիտար: Նրանց լրացման ձևը նույնն է: Ինֆորմատիկա (ԹԳՀԳ) և մայրենի առարկաների համար պատասխանների թերթիկ նախատեսված չէ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սովորել այն ճիշտ լրացնելը:

Ծանոթանանք ***ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ*** լրացման ընթացակարգին:

Ընդհանուր ցուցումներ

1. ***ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ*** պետք է լրացնել բացառապես **ՍԵՎ** կամ ԿԱՊՈՒՅՏ գույնի գրիչներով: Չի թույլատրվում այն լրացնել գունավոր (կարմիր, կանաչ, դեղին և այլն) կամ գելային գրիչներով:

2. ***Անձնական տվյալները*** (ազգանուն, անուն, հայրանուն, մարզ և դպրոց) լրացնել ընթեռնելի /տես նկարում/:



Ուշադրություն: Համակարգիչը ձեռագրով գրված **տեքստերը** չի ստուգում:

3. ***Անձնական համարի*** և ***կարճ պատասխանով*** առաջադրանքների դատարկ վանդակներում թվերը նույնպես լրացնել ընթեռնելի ձեռագրով /տես նկարներում/:



Ուշադրություն: Համակարգիչը ձեռագրով գրված **թվերը** չի ստուգում:

4. Համապատասխան քառակուսին նշել բացառապես ☒-ի տեսքով:

Ուշադրություն: Համակարգիչը ստուգում է միայն ☒-ով նշումները:

Անձնական համարի **լրացման ցուցումներ**

1. Տվյալ առարկայի օլիմպիադային մասնակցության համար ձեր անձնական համարին կարող եք ցանոթանալ առարկայական օլիմպիադաների համար նախատեսված կայքերից (https://olymp.am/ կամ https://lib.armedu.am/):

Ուշադրություն: Չշփոթել օլիմպիադայում օգտագործվող 6-անիշ ***անձնական համարը*** **emis**-ի միջավայրում օգտագործվող ***Աշակերտի ID***-ի հետ, դրանք տարբեր համարներ են:

2. Լրացրեք Ձեր անձնական համարը (**6-անիշ թիվ**), յուրաքանչյուր դատարկ վանդակում գրելով միայն մեկ թվանշան, այնուհետև այան մեջ թվանշանին համապատասխան քառակուսին նշեք ☒-ով: Օրինակ, **480219** անձնական համարը /տես նկարում/:



3. Համապատասխան քառակուսին չնշելու դեպքում համարը չի վերծանվի և կհամարվի անվավեր:

Դասարանի **և** ***առարկայի*** **լրացման ցուցումներ**

1. ***Դասարան*** դաշտում ☒-ով նշել քառակուսին, որը պարունակում է Ձեր դասարանի թիվը: Օրինակ, **10**-րդ դասարան /տես նկարը/:

2. ***Առարկա*** դաշտում ☒-ով նշել Ձեր առարկային համապատասխան քառակուսին, որը նշված է առարկայի ձախ մասում: Օրինակ, **Կենսաբանություն** առարկան /տես նկարը/:



Ընտրովի պատասխանով **առաջադրանքների լրացման ցուցումներ**

Առաջադրանքի համարին (դրանք 15-ն են՝ 1-ից 15-րդ) համապատասխան սյունակում ☒-ով նշել այն քառակուսին, որը պարունակում է ընտրված տարբերակը /ճիշտ պատասխանը/: Յուրաքանչյուր սյունակում պետք է նշել **ՄԵԿ** քառակուսի /առաջադրանքն ունի միայն մեկ ճիշտ պատասխան/:



Օրինակ, եթե 6-րդ առաջադրանքում ճիշտ պատասխանը **1**-ն է, 7-րդ առաջադրանքում՝ **4**-ը, 8-րդ առաջադրանքում՝ **2**-ը և 7-րդ առաջադրանքում՝ **4**-ը, ապա նրանք կնշվեն նկարում բերված ձևով:

Կարճ պատասխանով **առաջադրանքների լրացման ցուցումներ**

Յուրաքանչյուր առաջադրանքի համարին (դրանք 5-ն են՝ 16-ից 20-րդ) համապատասխան դատարկ վանդակներում լրացնել Ձեր ստացած թվային պատասխանը (այն կարող է ընդունել 0-ից 999 արժեքներից որևէ մեկը), և սյան մեջ թվանշանին համապատասխան քառակուսին նշել ☒–ով: Յուրաքանչյուր սյունակում պետք է նշել **ՄԵԿ** քառակուսի:

Օրինակ, եթե 18-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը **944** է, 19-րդ առաջադրանքինը՝ **60**, իսկ 20-րդ առաջադրանքինը՝ **8**, այդ դեպքում վանդակները պետք է լրացնել նկարում բերված տեսքով:



Ուշադրություն:

- Եռանիշ պատասխանի դեպքում լրացնել առաջադրանքի բոլոր դատարկ վանդակները և համապատասխան սյան մեջ նշել թվանշանին համապատասխան քառակուսին:
- Միանիշ կամ երկնիշ պատասխանի դեպքում լրացնել առաջադրանքի դատարկ վանդակները (հերթականությունը էական չէ, կարելի է լրացնել նաև առաջին վանդակից) և համապատասխան սյան մեջ նշել թվանշանին համապատասխան քառակուսին: Այս դեպքերում թվի սկզբից 0 (զերո) գրելու անհրաժեշտություն չկա:
- Սյունակում համապատասխան քառակուսին ☒–ով չնշելու դեպքում պատասխանը հաշվի չի առնվում՝ անկախ դատարկ վանդակներում լրացված թվանշանների ճիշտ կամ սխալ լինելուց: Հիշեք, համակարգիչը ստուգում է բացառապես ☒–ով նշված քառակուսիները, ձեռագիր գրված տեքստերի ստուգում չի կատարում:
- Քառակուսիները լրացնելիս **չի թույլատրվում** տարբեր նշումներ կատարել: Մասնավորապես, նկարում բերված ձևերով՝

և այլն:

- **Ջնջումներ** կատարել **չի թույլատրվում**:

Ուղեցույցը կազմեց **Դավիթ Մինասյանը**: